ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

«ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/46» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան **« 01 » « նոյեմբերի » 2018թ.**
ժամը 10:00

Մասնակցում էին՝

Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳՊ/ԳԱՊ)	Ռ.Զոբանյան
Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ)	Մ.Այդինյան
Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ)	Է.Մհերյան
Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ)	Հ.Հովհաննիսյան
Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ)	Ա.Փաշայան
Գնման Պատասխանատու/ Մրցույթի համակարգող (ԳՊ/ՄՀմ)	Լ.Զոհրաբյան

1. «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/46» ծածկագրով մրցույթի հանձնաժողովի նիստի անցկացման վայրը, օրը և ժամը.

(Ռ.Զոբանյան)

1.1. «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/46» ծածկագրով մրցույթի հանձնաժողովի նիստը կայացել է 2018 թվականի նոյեմբերի 1-ին, ժամը 10:00-ին, ք.Երևան, Կառավարության 3 շենք, 5-րդ հարկ, բնապահպանության նախարարություն, 514 սենյակ հասցեում:

2. «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/46» ծածկագրով մրցույթի հրավերով սահմանված կարգով մասնակիցների վերաբերյալ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացված եզրակացությունը շտկելու վերաբերյալ տեղեկություններ.

2.1. «Ջի-Էներջի Սերվիս» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում էլեկտրոնային ձևով՝ gnumner.mnp@yandex.ru էլեկտրոնային հասցեին, ստացվել է «Արդշինբանկ» ՓԲԸ-ի Մասիսի Մ/Ճ-ում 22.10.2018թ. փոխանցման անդորրագիր: «Ջի-Էներջի Սերվիս» ՍՊԸ-ի կողմից գնահատող հանձնաժողովին ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրված գրավոր տեղեկատվություն կամ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվություն չի ներկայացվել: «Ջի-Էներջի Սերվիս» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորությունը* ըստ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի տրամադրած տեղեկատվության, հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (24.10.2018թ.) կազմել է 63251 ՀՀ դրամ: Հայտով ներկայացված 2-րդ չափաբաժնով ժամկետանց հարկային պարտավորության «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված չափը գերազանցվել է 58071 ՀՀ դրամով:

2.2. «Մոսէքսը» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում էլեկտրոնային ձևով՝ gnumner.mnp@yandex.ru էլեկտրոնային հասցեին, ստացվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 31.10.2018թ. տրված տեղեկանք առ այն, որ 25.10.2018թ. դրությամբ հարկային մարմին կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել գումարների և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ: ՀՀ պետական եկամուտների կոմիտե կողմից տրված նոր տեղեկատվությունը հավաստում է, որ «Մոսէքսը» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց հարկային պարտավորություններ*: «Մոսէքսը» ՍՊԸ-ի ժամկետանց հարկային պարտավորությունը, ըստ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի տրամադրած տեղեկատվության, հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (25.10.2018թ.) կազմել է 9000 ՀՀ դրամ: Հայտով ներկայացված 1-ին չափաբաժնով ժամկետանց հարկային պարտավորության «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված չափը գերազանցվել է 7908 ՀՀ դրամով:

* «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված է, որ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար ՀՀ դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

3. Հանձնաժողովը որոշեց՝

(Ռ.Զոբանյան)

3.1. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի №526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը մերժել «Ջի-Էներջի Սերվիս» ՍՊԸ-ի և «Մոսէքսը» ՍՊԸ-ի հայտերը:

3.2. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

3.3. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 45-րդ կետը՝ սահմանված ժամկետում ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացնել «Մոսէքսը» ՍՊ և «Ջի-Էներջի Սերվիս» ՍՊ ընկերությունների տվյալները, քանի որ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն ժամկետանց հարկային պարտավորություններ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

4. Նիստին ներկա հանձնաժողովի անունները և ազգանունները:

Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳՊ/ԳԱՊ)	Ռ. Զոբանյան
Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ)	Մ.Այդինյան
Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ)	Է.Մհերյան
Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ)	Հ.Հովհաննիսյան
Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ)	Ա.Փաշայան
Գնման Պատասխանատու/ Մրցույթի համակարգող (ԳՊ/ՄՀմ)	Լ. Զոհրաբյան